

կը պարունակեն: կը հրամայենք նաև յիշեալ արքայազնին ու Մեր եւ իրեն յաջորդներուն, որ ե՛րբ եւ ի՛նչ կերպով ուզէ թող ըլլայ՝ Մեր երգումին ու խոստումին եւ ո՛չ իսկ ասոր մէկ մասին հակառակ ո՛ր եւ է հրաման չտան Մաղրիդի Վարչութեան: Իսկ եթէ՝ կա՛մ Մեր, կա՛մ յիշեալ արքայազնի եւ կա՛մ մեր ապագայ սերնդի կողմէ ասոր ամբողջութեան կա՛մ մէկ մասին հակառակ դաշնագրեր ու շնորհաթղթեր տրուին կա՛մ թէ հրամայուին տրուիլ, Մաղրիդի Վարչութեան եւ ազնւականներուն կը հրամայենք, որ անոնց չհպատակին եւ չգործադրեն զանոնք, եւ թէ այս պատճառով ո՛ր եւ է քաղաքային կա՛մ եղեռնական պատժի չենթարկուին, որովհետեւ՝ այս պարագային իրենց կրելիք բոլոր պատիժները վերցուցինք ջնջեցինք: Ուստի՝ յիշեալ Մաղրիդ քաղաքի Վարչութեան, թաղապետներու, ասպետներու, սեպուհներու, ազնուականներու, նոյնպէս եւ ուրիշ բոլոր թաղապետներու, երգուեալներու, դատաւորներու, արդարութեան ու ծովային պաշտօնեաներու, քաղաքապահներու եւ ուրիշ ամէն կարգի պաշտօնատարներու՝ բոլոր քաղաքաց, գիւղօրէից ու տեղեաց որք են այժմ եւ ապագային ալ պիտի լինին մեր իշխանութեան տակ՝ [կը հրամայենք], որ երբ մեր ներկայ շնորհաթուղթը կա՛մ թէ գիւանապետէն ստորագրուած ասոր մէկ օրինակը տեսնեն՝ Մաղրիդի Քաղաքային Վարչութիւնը հովանաւորեն ու պաշտպանեն մեր իրենց շնորհած այս իրաւունքով, եւ թոյլ չտան որ ուրիշ ո՛ր եւ է մէկն ասոր ամբողջութեան կա՛մ թէ մէկ մասին հակառակ վարուի ե՛րբ եւ ի՛նչ կերպով ուզէ թող ըլլայ. իսկ այն անձը կա՛մ անոնք որ այս բանն ընեն՝ մեր բարկութեան պիտի ենթարկուին ու իրր տուգանք՝ հազար դրբլա ոսկեղրամ պիտի վճարեն մեզ, Մաղրիդի յիշեալ Վարչութեան եւ ազնուականներուն, եւ ո՛վ որ այն անձին կողմնակցութիւն ընէ՝ պատճառած բոլոր վնասներու եւ կորուստներու կրկինը պիտի վճարէ: Արդ, ասոր համար կը հրամայենք տալ այս ոլորուն շնորհաթուղթը, որուն վրայ կընքուած ու կախուած է մեր կապարեայ կնիքը:

Այս շնորհաթուղթը պատրաստուեցաւ Սեգովիայի մէջ Մեր հրամանով գումարուած Սորճրդարանում, յերկոտասաներորդ օրն Հոկտեմբերի, ի թուին հազար չորսհարիւր քսանմէկ:

Եւ թաղաւորը կը հաստատէ շնորհաթուղթը:

Թագաւորազունն սէր Ենրիկ, որդի Գերագին, Գեհեջանիկ եւ Բարձրագասիւ ի թիսն սէր Յովհաննէս քաղաւորի, առաջին գահաժառանգ Աստիլլայի ու Լեոնի քաղաւորութեանց, կը հաստատէ:

Թագաւորազունն սէր Ֆերնանդո, որդի Թագաւորին, կը հաստատէ: